ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 15

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

1. Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 5 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին:

2) Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 14-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3) Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքի մշակման մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 16-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 19-րդ հոդվածների պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Հաստատել Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը համաձայն հավելվածի:
2. Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքներն իրականացնել սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Պտղնի համայնքի ավագանու
2017 թվականի հունիսի 12-ի
թիվ 16-Ն որոշման

ԿԱՐԳ

Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում է Պտղնի համայնքի վարչական տարածքում (այսուհետ՝ Համայնք) կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
1.2. Համայնքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Թափոնների մասին» «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

2. Կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացնողը.

2.1. Համայնքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքներն (այսուհետ՝ աղբահանություն) իրականացվում է համայնքապետարանի միջոցով:
2.2. Համայնքում աղբահանությունը կատարվում է Համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) հաստատած սխեմայով տեղադրված աղբարկղներում, կոնտեյներներում կենցաղային աղբը կուտակելու և հեռացնելու միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնների և նորմերի պահանջների համապատասխան:
2.3. Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Ընդ որում, աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:
2.4. Համայնքի աղբահանության դիմաց վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև վճարի գանձումն սահմանվում է Ավագանու սահմանած դրույքաչափերի համապատասխան:
2.5. Համայնքի աղբահանության դիմաց վճարողների հաշվառումն, աղբահանության վճարի հաշվարկումն, ինչպես նաև վճարի գանձումն իրականացվում է համայնքապետարանի միջոցով:

3. Աղբահանության դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի և սակագների սահմանումը, դրանց վճարողների հաշվառումը, հաշվարկումն ու գանձման ժամկետը.

3.1. Աղբահանության դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և սակագները սահմանում է համայնքի ավագանին:
3.2. Աղբահանության վճարը համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:
3.3. Աղբահանության դիմաց նախատեսված վճարների սակագները փոփոխելու պահից կատարվում է վերահաշվարկ, իսկ վճարումները կատարվում են ըստ նոր սակագների՝ նոր սակագնի ուժի մեջ մտնելու պահից:
3.4. Աղբահանության դիմաց վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական և ֆիզիկական անձինք (այսուհետ՝ Սուբյեկտ):
3.5. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացույցային ամիսը:
3.6. Աղբահանության դիմաց վճարման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:
3.7. Աղբահանության դիմաց վճարների կետանցման յուրաքանչյուր օրվա համար Սուբյեկտը վճարում է տույժ՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
3.8. Աղբահանության դիմաց վճարումները համայնքի բյուջե իրականացվում են բանկային փոխանցման միջոցով կամ կանխիկ:
3.9. Աղբահանության վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման և Համայնքի բյուջե մուտքագրման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Պտղնի համայնքի ղեկավար՝ ***Ա. Վիրաբյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 17-Ն

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 14-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի «Պտղնի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածում «քառամյա» բառը փոխարինել «հնգամյա» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 18

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Պտղնի համայնքի հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացմանն առնչվող պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագծային աշխատանքների նախագծման առաջադրանքին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ
2. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
3. ՂԵՎՈՆԴՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

ՀԱՄԵՄԱՏ
Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ավագանու
2017 թվականի հունիսի 12-ի N 18 որոշման

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Կոտայքի մարզի Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման

1. Համայնքի հիմնական բնութագիրը

համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝	799.45 հա
բնակչության թիվը՝	1776 մարդ
բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝	
0-ից մինչև 6 տարեկան երեխաներ	161 մարդ
7-ից մինչև 17 տարեկան դպրոցահասակներ	113 մարդ
աշխատունակ հասակի բնակչություն	1331 մարդ
թոշակառուներ	171 մարդ
հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝	
բնակավայրի հողեր, որից՝	265.56 հա
բնակելի կառուցապատում	196.28 հա
հասարակական կառուցապատում	5.23 հա
խառը կառուցապատում	---
ընդհանուր օգտագործման	29.69 հա
այլ հողեր	34.36 հա
գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	484.38 հա
վարելահող	75.08 հա
բազմամյա տնկարկներ	2.89 հա
խոտհարք	---
արոտ	105.66 հա
այլ հողեր	300.75 հա
արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, որից՝	11.03 հա
արդյունաբերության	0.12 հա
գյուղ. արտադրական	10.81 հա
պահեստարանների	0.10 հա
ընդերքօգտագործման	---
էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	14.07 հա
էներգետիկայի	6.91 հա
կապի	---
տրանսպորտի	7.16 հա
կոմունալ	---
հատուկ պահպանվող տարածքներ, որից՝	16.35 հա
պատմական և մշակութային հողեր	16.35 հա
ջրային հողեր, որից՝	6.39 հա
գետեր	4.61 հա
լճեր	1.49 հա
հիդրոտնտ. և ջրատնտ. այլ	0.29 հա
հատուկ նշանակության հողեր	0.39 հա
Անտառային հողեր	1.34 հա
պահուստային հողեր	---
* Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են առ 01.07.2016թ. հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշտման օրենսդրությամբ սահմանված կարգով:	

Տարածքները, ըստ սեփականության ձևերի		
ՀՀ քաղաքացիների սեփականություն	417.14 հա	
իրավաբանական անձանց սեփականություն	---	
համայնքային սեփականություն	347.85 հա	
պետական սեփականություն	32.05 հա	
օտար պետութ-ի, կազմ-ի և ՀՀ-ում կաց-ն հատուկ կարգավիճակ ունեցող անձանց	2.41 հա	

2. Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը

Համայնքում բնական, բուժական, առողջարարական, հանքահումքային և այլ պաշարներ չկան:

տվյալներ համայնքում առկա բնական, բուժական, առողջարարական, հանքահումքային և այլ պաշարների վերաբերյալ

Համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղերն են համարվում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և անասնապահությունը:

տվյալներ համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղերի վերաբերյալ

Համայնքը ներհամայնքային ավտոճանապարհներով կապված է Արովյան քաղաքի հետ: Համայնքը կոյուղացված չէ, ապահովված է էլեկտրամատակարարման և գազամատակարարման ցանցերով:

տվյալներ համայնքի ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ

3. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրությունների հիմնումը:

համայնքի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները

4. Նախագծման հիմքը.

Համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 12-ի N 18 որոշում (կցել պատճենը) «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի, տարածքների զոտևորման նախագծերի, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումը և 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» N 625-Ն որոշումը:

5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները,

ՀՀ կառավարության 2012թ-ի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշումը, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, հաստատված ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 48-Ն որոշմամբ:

որոշումների ընդունման ժամկետները, համարը, (կցել պատճենները)

6. Քաղաքաշինական (այդ թվում հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից, այդ թվում՝ երկրաշարժերից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները:

Ապահովել բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանությանն ուղղված՝ ՀՀ կառավարության 2012թ-ի փետրվարի 9-ի N 138-Ն որոշմամբ սահմանված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները: /համաձայն կարգի 1-ին կետի 3-րդ ենթակետի/: Գլխավոր հատակագծում նախատեսել համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիների համակարգերը /հուշարձանի պահպանության գոտի, կառուցապատման կարգավորման գոտի, լանդշաֆտի պահպանման գոտի/:

նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ դրանց առկայության դեպքում

7.Նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ցանկը.

Ելակետային տվյալներ են հանդիսացել կադաստրային և հողօգտագործման քարտեզները, տվյալներ տարածքի փաստացի օգտագործման վերաբերյալ , տվյալներ բնակելի, հասարակական և արտադրական կառուցապատման վերաբերյալ, տվյալներ կոմունալ տնտեսության և ինժիներատրանսպորտային ենթակառուցվածքների առկա իրավիճակի մասին, դեմոգրաֆիկ տվյալներ,համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պատճեններ: Համայնքը ունի ավագանու կողմից 2012 թվականի փետրվարի 13-ի N 5 որոշմամբ հաստատված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա, որի կազմում առկա է սահմանված կարգով հաստատված սեյսմամիկրոշրջանացման և ինժեներաերկրաբանական շրջանացման քարտեզներ:

նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթեր, տարածքի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի կադաստրի այլ տվյալները (այդ թվում՝ փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ, ինժեներաերկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզ, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ –ից.

8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ.

Համայնքի վարչական տարածքում գյուղմթերքների վերամշակման արտադրություն կազմակերպելու նպատակով տարածքների նախատեսում՝ ապահովելով սանիտարապաշտպանիչ գոտիները:

անհրաժեշտության դեպքում նշել լրացուցիչ պայմանները

9. Համայնքի գոտիավորման նախագծին և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային ներկայացվող պահանջները.

Համայնքի գլխավոր հատակագծի նախագծի կազմում ներառվելու են նաև հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի, ինչպես նաև բնակավայրի և բնակավայրից դուրս կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման նախագծի մշակումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» N 625-Ն որոշմամբ

10. Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները

Համայնքի տարածական զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները, այդ թվում ճարտարապետահատակագծային և գործառնական զարգացումը, ինժիներատրանսպորտային ենթակառուցվածքների սպասարկան ու զարգացման կազմակերպումը, գծային օբյեկտներ պահպանմանն ու օգտագործմանը, շրջակա միջավայրի, լանդշաֆտների պահպանությանն ու կատարելագործմանը, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացմանը, տարածքների կազմակերպմանն ու կառուցապատմանը, պատմության և մշակութային հուշարձանների պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները:

Գրաֆիկական մասով պարզեցված գլխավոր հատակագիծը մշակվում է հետևյալ բովանդակությամբ և կազմով՝ համայնքի առկա վիճակի հատակագիծ /հենակետային հատակագիծ/ սեփականության սուբյեկտների գծագիր, ռիսկերի և սահմանափակումների քարտեզ / համալիր գնահատման հատակագիծ/ , ինժեներաերկրաբանական շրջանցման և սեյսմիկ միկրոշրջանցման քարտեզ, համայնքի տարածական զարգացման հատակագիծ /հիմնական գծագիր/ , բնության, պատմության և մշակույթի հատուկ պահպանվող տարածքները, դրանց պահպանման գոտիները , հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիրը, հատակագծի իրականացման հերթականությունը , կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման գծագիր:

ի լրումն օրենսդրությամբ սահմանված նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ (առկայության դեպքում)

Առաջադրանքը կազմեց՝
Պտղնի համայնքի ղեկավար՝ *Ա. Վիրաբյան*